ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

" 18" մայիսի 2013թ. № 53-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2013 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գնով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N81-Ն որոշման դրույթների, **կարգադրում եմ՝**

1. ՀՀ Սյունիքի մարզում պետական աջակցության ծրագրի իրականացման ընթացքն ուսումնասիրելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

1. Վ.Գրիգորյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, աշխատանքային խմբի ղեկավար
2. Ս. Թանգյան- ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
3. Ս.Ավետիսյան- ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ
4. Հ. Հակոբյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ
5. Ն. Շադունց- ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ
6. Հ. Քարամյան- ՀՀ ԿԱ ԱԱԾ Սյունիքի մարզային վարչության ավագ օպերլիազոր (համաձայնությամբ)

2.Աշխատանքային խմբին՝ պետական աջակցության ծրագրում ընդգրկված համայնքներում կատարել ուսումնասիրություններ և մեկամսյա ժամկետում ներկայացնել արդյունքները:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2013թ. մայիսի 18
ք. Կապան